# ՄՄՈՒՀ-երի (քոլեջների ) շրջանավարտների ընդունելություն

ՄՄՈՒՀ-ի (միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների) շրջանավարտների 2020-2021 ուսումնական տարվա ԵՊՀ ընդունելության դիմում-հայտերը այստեղ՝ ընդունվելու են հունիսի 30-ից մինչև օգոստոսի 30-ը ներառյալ առցանց տարբերակով՝ eduorg@ysu.am էլեկտրոնային հասցեի միջոցով:

Համաձայն ՀՀ կառավարության մայիսի 27-ի N856-Ն որոշման՝ դիմում-հայտը կարող են լրացնել միայն «Գերազանց» և(կամ) «Լավ» գնահատական ունեցող շրջանավարտները։ Դիմում-հայտին անհրաժեշտ է կցել հետևյալ փաստաթղթերը( սքանավորված)՝

1. Դիպլոմ և դիպլոմի միջուկը (միջուկը սքանավորվում է երկու կողմից)
2. Անձնագիր կամ նույնականացման քարտ
3. Կցագրման վկայական կամ զինվորական գրքույկ

Նշենք, որ դիմորդին չի թույլատրվում ներկայացնել մեկից ավելի դիմում-հայտ: Այստեղ նշված են ԵՊՀ 2020-2021 ուստարվա ուսման վարձավճարների չափերը ըստ մասնագիտությունների:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 077337069 հեռախոսահամարով յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը $13^{00}$-ից մինչև $16^{00}$:

ԵՊՀ-ն հաջողություն է մաղթում բոլոր դիմորդներին:

412b2bf7203a4bea411fc2144d077850

ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար

պարոն Գ. Գևորգյանին

------------------------------------------------------------քոլեջի շրջանավարտ

-------------------------------------------------------------------------------- -ից
անուն հայրանուն ազգանուն

## Դիմում

Ցանկանում եմ շարունակել կրթությունս ԵՊՀ ------------------------------------------------- ֆակուլտետի

-----------------------------------------մասնագիտության առկա / հեռակա (ընդգծել) ուսուցման 2-րդ կուրսից:

Դիմորդ` ------------------------------------------------------------------------------------ 2020թ.
անուն ազգանուն հայրանուն ամսաթիվ

Հեռախոս 1 N

Հեռախոս 2 N

412b2bf7203a4bea411fc2144d077850

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մայիսի 2020 թվականի N 856 - Ն

## ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ՝ 2020/2021 ՈՒՍՈՒՄ-ՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Կրթության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ 2020/2021 ուսումնական տարում բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշմամբ հաստատված կարգով չկարգավորվող հարա-բերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ի N 752-Ն որոշման հավելվածով հաստատված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ



2020 թ. մայիսի 30

Երևան

412b2bf7203a4bea411fc2144d077850

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
մայիսի 27-ի N 856 -Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ՝ 2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ 2020/2021 ուսումնական տարում Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ բուհ) համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու հետ կապված առանձնահատկությունները:

2. Սույն կարգը տարածվում է Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական և ոչ պետական հավատարմագրված ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ՄՄՈՒՀ) վրա:

3. ՄՄՈՒՀ բարձր առաջադիմություն ցուցաբերած (միայն «Լավ» և (կամ) «Գերազանց» գնահատականներ ունեցող) շրջանավարտները (այսուհետ՝ հավակնորդ) 2020/2021 ուսումնական տարում կարող են կրթությունը շարունակելու բուհում՝ համապատասխան մասնագիտությամբ՝

1) եթե հավակնորդի ուսումնառած և նախընտրած մասնագիտության ուսումնական պլաններով նախատեսված առարկաների (մոդուլների) առարկայական տարբերությունների (առարկայական տարբերություն է համարվում նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով հաստատված, սակայն հավակնորդի կողմից չուսումնասիրված, չգնահատված առարկաների ժամաքանակների կամ մոդուլային ուսումնական ծրագրի բովանդակության համեմատությամբ առնվազն 30 և ավելի տոկոս կազմող տարբերությունը) քանակը չի գերազանցում 8-ը, ապա՝

ա. մինչև 2014 թվականը ՄՄՈՒՀ ընդունված հավակնորդների դեպքում՝ առկա կամ հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում,

բ. 2014 թվականից սկսված ՄՄՈՒՀ ընդունված հավակնորդների դեպքում՝ միայն հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ բարձրագույն կրթության մասնագիտությունների գծով հեռակա ուսուցման կրթության ձևը նախատեսված չլինելու դեպքում՝ երկրորդ կուրսում՝ առկա ուսուցմամբ.

2) վճարովի հիմունքով՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնություններ ունեցող հավակնորդի՝ սույն կարգով կրթությունը շարունակելու դեպքի:

4. ՄՄՈՒՀ-ը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված ցանկի հիման վրա, 3 աշխատանքային օրվա ընթացքում, հրապարակում է ՄՄՈՒՀ-ից համապատասխան բուհերում կրթությունը շարունակելու համար հատկացված տեղերի թիվը՝ ըստ մասնագիտությունների և առարկայական տարբերությունների:

5. Հավակնորդը՝ բուհ տեղափոխվելու մասին դիմումը, էլեկտրոնային եղանակով ՄՄՈՒՀ-ի ղեկավարին է ներկայացնում մինչև 2020 թվականի մայիսի 23-ը ներառյալ:

6. ՄՄՈՒՀ-ի պետական որակավորող հանձնաժողովը պետական ամփոփիչ ստուգման արդյունքների հիման վրա կազմում է արձանագրություն և մինչև հունիսի 10-ը հրապարակում է կրթությունը բուհում շարունակող հավակնորդների ցանկը:

7. ՄՄՈՒՀ-Ը 2019-2020 ուսումնական տարվա հավակնորդների, իսկ նախկին տարիների հավակնորդները անձամբ՝ փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով ներկայացնում է համապատասխան բուհ՝ մինչև տվյալ տարվա օգոստոսի 30-ը:

8. Եթե բարձրագույն ուսումնական հաստատություն տեղափոխվող հավակնորդների թիվը գերազանցում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից տվյալ ուսումնական տարվա համար հատկացված տեղերի թիվը, ապա հանձնաժողովը հավակնորդների ընտրությունն իրականացնում է մրցութային հիմունքով՝ առաջնահերթությունն ըստ հաջորդականության տալով այն հավակնորդներին, ովքեր ունեն՝

1) գերազանցության ավարտական փաստաթուղթ (գերազանցության դիպլոմ).

2) ավարտական փաստաթղթի (դիպլոմի) ներդիրի գնահատականների առավելագույն միջին թվաբանական (միջին թվաբանականը հաշվարկելիս անցում է կատարվում 20 միավորային համակարգի և այն կլորացվում է տասնորդականի ճշտությամբ).

3) պետական ամփոփիչ ստուգման արդյունքում առավել բարձր միավորներ:

9. Բուհի ռեկտորը հանձնաժողովի մրցույթի արդյունքների հիման վրա մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 20-ը տալիս է մրցույթով անցած ուսանողի ընդունման (կցագրման) հրաման, որին կցվում են առարկայական տարբերությունների ցանկը և դրանց հանձնման անհատական ժամանակացույցը: Մրցույթով անցած և պարտադիր զինվորական ծառայության մեկնած անձանց տրվում է ակադեմիական արձակուրդ: Առարկայական տարբերությունների հանձնման առավելագույն ժամկետը երեք ամիս է: Մրցույթով անցած ուսանողները (կամ լիազորված անձը) բուհ են ներկայացնում ավարտական փաստաթղթի՝ դիպլոմի և դրա ներդիրի բնօրինակը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ



Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

Ց Ա Ն Կ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆՐԱՆՑՈՒՄ ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵՐԻ, ՈՐՈՆՑ ԳԾՈՎ
ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ
ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՄԲ
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄԸ

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

| Դասիչ | Բուհը, Մասնագիտություն | Ուսուցման ձևը | |
|---|---|---|---|
| | | Առկա | Հեռակա |
| **1.** | **Երևանի պետական համալսարան** | **214** | **71** |
| 011301.00.6 | Ընդհանուր մանկավարժություն | | |
| | 011301.03.6 Սոցիալական մանկավարժություն | 3 | |
| 021801.00.6 | Արվեստի տեսություն և պատմություն | | |
| | 021801.02.6 Արվեստաբանություն | 9 | |
| 022102.00.6 | Աստվածաբանություն | | |
| | 022102.01.6 Աստվածաբանություն | 5 | 3 |
| 022201.00.6 | Պատմություն | | |
| | 022201.01.6 Պատմություն | 12 | 4 |
| 022101.00.6 | Կրոնագիտություն | | |
| | 022101.01.6 Կրոնագիտություն | 5 | |
| 023101.00.6 | Հայոց լեզու և գրականություն | | |
| | 023101.01.6 Հայոց լեզու և գրականություն | | 3 |
| 023102.00.6 | Օտար լեզու և գրականություն | | |
| | 023102.01.6 Ռուսաց լեզու և գրականություն | 5 | |
| 023201.00.6 | Լեզվաբանություն | | |
| | 023201.09.6 Միջմշակութային հաղորդակցություն և թարգմանություն (ռուսերեն) | 5 | |
| | 023201.01.6 Թարգմանչական գործ /անգլերեն, հայերեն/ | 16 | |

| | | | |
|---|---|---|---|
| | 023201.02.6 Միջմշակութային հաղորդակցություն /անգլերեն/ | 16 | |
| | 023102.09.6 Անգլերեն լեզու, ֆրանսերեն լեզու և հաղորդակցություն | 12 | |
| 022202.00.6 | Հնագիտություն | | |
| | 022202.01.6 Հնագիտություն և ազգագրություն | 7 | |
| 031801.00.6 | Միջազգային հարաբերություններ | | |
| | 031801.01.6 Միջազգային հարաբերություններ | | 6 |
| 031101.00.6 | Տնտեսագիտություն | | |
| | 031101.01.6 Տնտեսագիտություն | 12 | 6 |
| 031301.00.6 | Հոգեբանություն | | |
| | 031301.01.6 Հոգեբանություն | 5 | 6 |
| 031501.00.6 | Մշակութաբանություն | | |
| | 031501.01.6 Մշակութաբանություն | 9 | |
| 032101.00.6 | Լրագրություն | | |
| | 032101.01.6 Լրագրություն | 2 | 4 |
| 041201.00.6 | Ֆինանսներ | | |
| | 041201.01.6 Ֆինանսներ (ըստ ոլորտի) | 12 | |
| 041301.00.6 | Կառավարում | | |
| | 041301.01.6 Կառավարում (ըստ ոլորտի) | 12 | 6 |
| | 041301.02.6 Հանրային կառավարում | | 6 |
| 051101.00.6 | Կենսաբանություն | | |
| | 051101.01.6 Կենսաբանություն | 5 | 3 |
| | 053101.02.6 Դեղագործական քիմիա | | 6 |
| | 053101.04.6 Սննդի անվտանգություն | 5 | |
| 054101.00.6 | Երկրաբանություն | | |

| | | | |
|---|---|---|---|
| | 054101.01.6 Երկրաբանություն | 8 | 3 |
| 054201.00.6 | Աշխարհագրություն | | |
| | 054201.02.6 Քարտեզագրություն և կադաստրային գործ | 8 | 4 |
| 055101.00.6 | Ֆիզիկա | | |
| | 055101.01.6 Ֆիզիկա | 12 | |
| | 055101.02.6 Միջուկային ռեակտորների ֆիզիկա | 4 | |
| 061101.00.6 | Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն) | | |
| | 061101.02.6 Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա | | 2 |
| 091601.00.6 | Ֆարմացիա | | |
| | 091601.01.6 Ֆարմացիա | 10 | |
| 092301.00.6 | Սոցիալական աշխատանք | | |
| | 092301.01.6 Սոցիալական աշխատանք | | 3 |
| 101801.00.6 | Սերվիս | | |
| | 101801.01.6 Սերվիս | 15 | 6 |

Հավելված N2

ՀՀ կրթության, գիտության,

մշակույթի և սպորտի

նախարարի

«   » ----------2020թ..

N   հրաման

**ՑԱՆԿ**

412b2bf7203a4bea411fc2144d077850

## ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՄԲ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

| N | ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ |
|---|---|
| 1 | Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջ |
| 2. | Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ |
| 3. | Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ |
| 4. | Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ |
| 5. | Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության, հայ-հունական պետական քոլեջ |
| 6. | Երևանի տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ |
| 7. | Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջ |
| 8. | Երևանի պետական հումանիտար քոլեջ |
| 9. | Երևանի Ռ.Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ |
| 10. | Երևանի Ա.Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջ |
| 11. | Երևանի Փ.Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ |
| 12. | «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր |
| 13. | Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (միջին մասնագիտական կրթական ծրագիր) |
| 14. | «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի (միջին մասնագիտական կրթական ծրագիր) և Գյուղատնտեսական ... |

| | |
|---|---|
| 15. | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (միջին մասնագիտական կրթական ծրագիր) և Գյումրու մասնաճյուղի (միջին մասնագիտական կրթական ծրագիր) |
| 16. | «Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարան» հիմնադրամի քոլեջ (դեպարտամենտ) |
| 17. | Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ |
| 18. | Գյումրու պետական տեխնիկական քոլեջ |
| 19. | «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (միջին մասնագիտական կրթական ծրագիր) |
| 20. | Գյումրու Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջ |
| 21. | Արթիկի պետական քոլեջ |
| 22. | Վանաձորի Ս.Թևոսյանի անվան պետական պոլիտեխնիկական քոլեջ |
| 23. | Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ |
| 24. | Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ |
| 25. | «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (միջին մասնագիտական կրթական ծրագիր) |
| 26. | Ալավերդու պետական քոլեջ |
| 27. | Սպիտակի պետական քոլեջ |
| 28. | Գավառի պետական երաժշտական քոլեջ |
| 29. | Սևանի բազմագործառութային պետական քոլեջ |
| 30. | Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ |
| 31. | Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջ |
| 32. | Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ |
| 33. | Կապանի արվեստի պետական քոլեջ |
| 34. | Սիսիանի պետական քոլեջ |
| 35. | Գորիսի պետական քոլեջ |
| 36. | Մեղրու պետական քոլեջ |

| | |
|---|---|
| 37. | Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ |
| 38. | Դիլիջանի պետական քոլեջ |
| 39. | Դիլիջանի արվեստի պետական քոլեջ |
| 40. | Բերդի բազմագործառութային պետական քոլեջ |
| 41. | Նոյեմբերյանի պետական քոլեջ |
| 42. | Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ |
| 43. | Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ |
| 44. | Արմավիրի արվեստի պետական քոլեջ |
| 45. | Էջմիածնի Վ.Համազասպյանի անվան պետական քոլեջ |
| 46. | Աբովյանի պետական քոլեջ |
| 47. | Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ |
| 48. | Չարենցավանի պետական քոլեջ |
| 49. | Արարատի պետական քոլեջ |
| 50. | Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ |
| 51. | Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ |
| 52. | Երևանի պարարվեստի պետական քոլեջ |
| 53. | Երևանի մշակույթի պետական քոլեջ |
| 54. | Երևանի Էստրադային և ջազային արվեստի պետական քոլեջ |
| 55. | Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ |
| 56. | Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ |
| 57. | «Հայաստանում Եվրոպական քոլեջ» հիմնադրամ |
| 58. | Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ |
| 59. | Ստեփանավանի պետական գյուղատնտեսական քոլեջ |
| 60. | Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջ |
| 61. | Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջ |
| 62. | Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ |
| 63. | Նոր Գեղիի պետական գյուղատնտեսական քոլեջ |

412b2bf7203a4bea411fc2144d077850

| | |
|---|---|
| 64. | Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ |
| 65. | «Երևանի հենակետային բժշկական քոլեջ» ՓԲԸ |
| 66. | Երևանի Հայ-ամերիկյան «Էրեբունի» պետական բժշկական քոլեջ |
| 67. | Գյումրու պետական բժշկական քոլեջ |
| 68. | Դիլիջանի պետական բժշկական քոլեջ |
| 69. | Վանաձորի պետական բժշկական քոլեջ |
| 70. | Մարտունու պետական բժշկական քոլեջ |
| 71. | Գավառի պետական բժշկական քոլեջ |
| 72. | Արմավիրի պետական բժշկական քոլեջ |
| 73. | Հրազդանի պետական բժշկական քոլեջ |
| 74. | Արարատի պետական բժշկական քոլեջ |
| 75. | Կապանի պետական բժշկական քոլեջ |
| 76. | Ավիաուսումնական կենտրոն |
| 77. | Երևանի «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ (Հավատարմագրված մասնագիտություններով) |
| 78. | Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջ (Հավատարմագրված մասնագիտություններով) |
| 79. | «Երևանի իրավատնտեսագիտական և կառավարման ոլեջ» կրթահամալիր |
| 80. | «Հայաստանում ֆրանսիական քոլեջ» հիմնադրամ |
| 81. | Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայ իջին մասնագիտական կրկրթական ծրագիր) |
| 82. | Արագածոտնի տարածաշրջանային պետական քոլեջ |
| 83. | «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ԲԸ |

412b2bf7203a4bea411fc2144d077850